ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 424-Ա/2 10.04.2020թ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ԿՎԱՐՏԵՏՆԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԵՐԳԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Ժամանակակից հայ կոմպոզիտորների կվարտետներ» խորագրով իրականացված համերգի ծրագրի աջակցության նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Ժամանակակից հայ կոմպոզիտորների կվարտետներ» խորագրով իրականացված համերգի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախատեսված գումարներից հատկացնել 144.0 հազար (մեկ հարյուր քառասունչորս հազար) դրամ՝ 2020 թվականի մարտի 10-ին «Ժամանակակից հայ

կոմպոզիտորների կվարտետներ» խորագրով իրականացված համերգի աջակցության նպատակով «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի համերգասրահի վարձակալության ծախսերի փոխհատուցմանը:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Կոմիտասի անվան ազգային քառյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության ժամանակակից արվեստի և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
« » « » 2020 թ.
N հրամանի

ԾՐԱԳԻՐ

«Ժամանակակից հայ կոմպոզիտորների կվարտետներ» խորագրով իրականացված համերգի

1	Կազմակերպության անվանում	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Ք.Երևան, Իսահակյան 1
3	Ծրագրի անվանում	«Ժամանակակից հայ կոմպոզիտորների կվարտետներ»
3.1	Բովանդակություն	Ծրագրում՝ ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ. ***Ժիրայր Շահրիմանյան*** "***Ten Microludes for string quartet***" ***Վաչե Շարաֆյան*** «***Have mercy on me, O God***" ***մենակատարար՝*** ***Տիգրան Մելքոնյան Սուրեն Զաքարյան*** "***In statu nascendi***" ***Լևոն Զաուշյան*** "***From a time of absurdity***"
3.2	Նպատակ	Կոմիտասի անվան ազգային քառյակի համերգացանկում ընդգրկել հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ
3.3	Անցկացման ժամկետ	Մարտի 10 2020 թ.
3.4	Անցկացման վայր	Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն
3.5	Ակնկալվող արդյունքներ	Գեղեցիկ և հիշարժան համերգային ծրագիր, որի ընթացքում հանդիսատեսը ունկնդրեց հայ ժամանակակից կոմպոզիտորների նոր ստեղծագործություններ
4.	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	200 հանդիսատես